ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Վշտի խորին զգացումով մեր ցավակցությունն ենք հայտնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի տարաժամ մահվան կապակցությամբ:

Նորին Սրբությունը աստվածաբանական իր իմացությամբ դարձավ մեր սուրբ գրերի և 1700-ամյա վաստակի նորօրյա թարգմանը, պահպանեց ու հարստացրեց հայ հոգևոր մշակույթի ձեռքբերումները: Վեհափառ Հայրապետը եղավ ազգային միասնության ամրապնդման, հայկական պետականության հզորացման, իր հոտի հոգևոր վերածննդի մեծագույն ջատագովը:

Մեծ էր նրա վաստակը նաև աշխարհասփյուռ հայ գաղթօջախները և եկեղեցիները Մայր Հայրենիքի շուրջը համախմբելու գործում: Քույր Եկեղեցիների հետ նորովի համագործակցությամբ նա նոր էջ բացեց միջեկեղեցական հարաբերություններում:

Վեհափառ Հայրապետի ձեռամբ և օրհնությամբ էր, որ կյանքի կոչվեցին բազում ընկերային, կրթական-հոգևոր ծրագրեր, հրատարակվեցին աստվածաբանական և հայագիտական բազմաթիվ աշխատություններ, որոնք հոգեպես կկրթեն և կդաստիարակեն ապագա սերունդներին:

Ցավի և վշտի այս օրերին մենք մեր որդիական խոնարհումն ենք հայտնում Վեհափառ Հոր լուսավոր հիշատակի առջև:

ՎԱՉԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ Վարչապետ